



42. ԶԱՆ-ԽԱՐԴԱՇ

Մի մարդ ա ըլլում, օխտ կնիկ ա ունում, օխտ կնիկ լե շոր է լըլլում, դա գնում է մոլլի վուշտը, որ մուլեն գիր մ'անե իր կընկըտերանց: Մուլեն գիր է անում:

Ասում է.— Քո օխտը կնանիք էլ կերթան ջուրի խրաղը:

Տալիս է օխտ հատ խնձոր, վեցը սաղ է ըլլում. մեկը կիսատ, էդ վեց խնձորը վեց կնիկ է ուտում, կիսատ խնձորն էլ՝ մեկ կնիկն է ուտում:

Ասելիս է.— Դա է իմ դամաթը:

Դրանք ուտում են, եդ են հընկնում, երկուհոգիսանում են, դրանք գալիս են օխտն էլ խըտոր հընկնում պառկում, ազատվում են: Օխտն էլ տղա բերին:

Ծրեխաներանց հայրը վեր է կենում, դնում, որ երեխանց համար կանֆետ, միրգ բերի: Հուշապը հըռաստ է գալի, կուլ տալի էդ մարգին:

էս տղերքը վեր են կենում, գնում են իրանց հոր արինը առնելու: Վեց աղբեր, էն կիսատ խրնձոր ուտողի տղին շեն թողնում էրանց հետ գնալի: Մեծում են, եդ են ձգում:

Ասում ին.— Դու ի՞նչ էս, որ մեզ հետ գաս:

Իրանք են փնում:

Փնում են, ճամբում տեսնում են մի շուպան:

Չոպանն ասում է.— Վեց աղբեր, դուք հո՛ւր կերթաք:
Նրանք ասում են.— Մենք կերթանք Հուշապից մեր հոր արունք-
առնելու:

Ասում է.— Ձեզ մի խան կաթ կկթեմ ոչխարներից, չվել ես
կերթամ ոչխարները ցած կանեմ, դուք էդ խան կաթը խմեք չվել
իմ դալը, կիմանամ որ Հուշապից դուք ձեր հոր արունը կառնեք,
թե չէ՝ չի խմեք չվել իմ դալը, չեք կրնար առնել, մեղք էք, մեք գնալ:

Դա գնում է ոչխարները ցած անում, դալի տեսնում, որ մի հո-
գի է խմում, ասում է. «Պահովվե՛՛, էսքան վախտում դեռ մեկդ էք
կաթ խմել, մ'էրթաք, կարալ չեք առնում ձեր հոր արունը»:

էս վեց աղբեր չեն լսում շոպանին, վեր են կենում ու սրանք
գնում, թե. «Պետք է մենք գնանք մեր հոր արունը առնենք»:

Սրանք մը քիչ տեղ գնում են, տեսնում են մի տվարած:

Տվարածն ասում է.— Վեց աղբեր ո՛ւր էք գնում:

էս վեց աղբերն ասում են, թե.— Գնում ենք մեր հոր արունը
առնենք Հուշապից:

Ասում է տվարած.— էս մի ցլիկը թէ որ մորթեք, միս անենք,
ուտենք, չվել իմ էն տվարնին ցած անիլը, կիմանանք, որ արունը
կառնեք Հուշապից, թե չէ՝ չի մորթեք ուտեք, չէք կարա առնուլ:

Տվարածը գնում է տվարնին ցած անում, գալի տեսնում, որ
ցլիկը նոր են վեր գցել, որ մորթեն:

Ասում է.— Պա՛, սլա՛, կարալ չէք առնուլ ձեր հոր արունը,
դառեք, դնացե՛ք:

Դրանք՝ էդ վեց աղբերը, էդ տվարածին չեն լսում:

Ասում են, որ.— էդ տվարածն ի՞նչ ա, որ մենք դրան լսենք,
բերեք գնանք մեր հոր արունը առնենք:

էդ վեց աղբերը շատ են գնում, թե քիչ են գնում, գնում են
տեսնում մի իլդարած:

էս իլդարածն ասում է.— Վեց աղբեր, ո՛ւր էք գնում:

էդ վեց աղբեր ասում են.— Գնում ենք Հուշապից մեր հոր
արունը առնելու:

Ձիարածն ասում է.— Չվել էն մագլանները իմ ցած անելը թէ
դուք, էդ վեցդ, էդ փղին բռնեք, վեր ելեք գես ու դեն քըշեք, կի-
մանամ, որ ձեր հոր արունը կառնեք: Եթե չի բռնեք, չէք կարա
առնում, գնալու էք, մեղք էք, մի՛ գնաք:

Իլդարած գնում է մագլանները ցած անում, գալի տեսնում, որ
վեց աղբեր չալիչ էլել, դեռ չեն կարում ձին բռնել, որ վեր ելեն
քշեն:

Ասում է.— Պա՛, պա՛, մե գնալ, եդ դառեք գնացեք ձեր տուն,
Հուշապից չեք կարա ձեր հոր արունը առնեք:

Սրանք՝ վեց աղբերը լսում չեն, ասում են.— Սա ի՞նչ է, որ
արան լսենք, մենք մեր հոր արունը առնենք, սա շաշին մեկն է:
Մեր հոր արունը մենք կերթանք, կառնենք Հուշապից:

Էդ վեց աղբեր թհնց ասում են ու խոլում: Ծատ են գնում,
թե քիչ են գնում, Հուշապը իրեն աղջկան դուրս է ուղարկում,
ասում է.— Աղջի՛, տես ի՞նչ է երևում:

Աղջիկը դուրս է գալի, մտիկ տալի, որ վեց հատ ճանճ ու մժեղ
է գալի, գնում է Հուշապին ասում է, թե.— Վեց հատ ճանճ ու մժեղ
է գալի:

Հուշապն ասում է, թե.— Մեկ էլ դուս մտիկ:

էս աղջիկ դուս է ըլլում, մտիկ տալի, տեսնում վեց մարդ է
գալի:

Հուշապն ասում է, թե.— Էդ էլ մեր խըսմաթն է,— ասում է,—
աղջի՛, հելի տես, թէ բալի շափարը կամաց են անցնում, թէ եկին:

Աղջիկը գնում է ասում Հուշապին, թե.— Չափարը հենց կա-
մաց անցկացան, մեկն էլ վեր ընկավ:

Հուշապն ասում է, որ.— Էդ վեցն էլ մեր խըսմաթն է:

Ասում է սարձյալ աղջկան.— Աղջի՛կ, մտիկ տուր, տես թէ
հագողը ճիթե-ճիթ են ուտում, թէ գիլա-գիլա:

Աղջիկը մտիկ է տալի ու գնում հուշապին ասում թե.— Գիլա-
գիլա են ուտում:

Հուշապն ասում է.— Աղջի՛, հելլե մեկ էլ դուս մտիկ, տես
աղբրից պարզ տեղից են ջուր խմում, թէ պղտոր տեղից:

Աղջիկը մտիկ է տալի: Տեսնում է, որ պարզ տեղից են խմում:

Աղջիկը գնում ու Հուշապին ասում է, թե.— Պարզ տեղից
խմեցին:

Հուշապն ասում է.— Դրանք էլ իմ խըսմաթն են:

էս վեց աղբերը գնում են Հուշապի դռանը կաղնում են, ամեքը
մի դանակ հանում, ըժում դի տալի հուշապին.— Հուշա՛պ, դուս
արի:

Հուշապը դուս ա դալի, տեսնում, որ ամենք մի դանակ հանել
են, ասում է.— Դուք էլ իմ խըսմաթն էք:

Հուշապ մի սենց չք՞Ֆ՞ անում, քաշում իրան: Վեցին էլ կուլ
տալի:

Հըմի դրանք թողունք ըզտեղ, խապար ո՞ր տեղից տանք՝ կիսատ խընձոր ուտողի տղիցը:

էս կիսատ խնձոր ուտողի տղենը տեսնում ա, որ իրան հերն ու աղբերտինքը չէկան, հետացան:

Վեր ա կենում ինք ու ճամբեն հընկնում, թէ.— Գնա՛մ, տեսնամ, թէ ինչի՞ հետացան:

Դա դալիս ա ճամբում տեսնում մի շորան:

Չորանն ասում է, թէ.— Փարակյոթ, ո՞ւր էս գնում:

Դա ասում է շորանին, թե.— Քու մերը..., փարակյոթն ո՞վ է:

Ասում է շորան.— Բա ի՞նչ ասեմ:

Ասում է թէ.— Ջան-խարդաշ ասա՛:

Չորանն ասում է.— Ջան-խարդաշ, ո՞ւր էս դնում:

Նե լե ասում է.— Գնում եմ իմ հոր ու իմ աղբրտանց արինը առնելու:

Թե ասում է շորան.— Ես մի խան կաթ կկթեմ, թէ խմես՝ չվել իմ էն իծուն ցած անիլը, կիմանամ, որ կառնես, թե չխմես՝ կիմանամ, որ առնողը չես:

Չոպան հելլե երես դեն է թեքում, մի քիչ դնում աղաք թէ չէ, Ջան-խարդաշ ձեռաց խմում է կաթը ու ասում է.— Չոպան աղբեր, մեկ լե կթես խմեմ:

Ասում է շոպան.— էլ կաթ չկա, գնա՛, գնա՛, արինը կառնես:

Դա վեր ա կենում դնում, տեսնում է, որ մի տվարած:

Տվարածն ասում է թէ.— Փարակյոթ ո՞ւր ես գնում:

Դա ասում է. ...Ո՞վ է փարակյոթը:

էն տվարածն ասում է.— Բա ի՞նչ ասեմ:

Ասում է.— Ջան-խարդաշ ասա:

Ասում է տվարածն.— Ջան-խարդաշ, ո՞ւր էս գնում:

Ասում է Ջան-խարդաշ.— Գնում եմ իմ հոր ու աղբրտանց արինը առնելու Հուշապից:

Ասում է.— Չըվել իմ էն տվարնին ցած անիլը, թէ ցլիկը մորթես՝ կիմանամ, որ կառնես:

էդ տվարածը մի քիչ աղաք է գնում թէ չէ, հետ է մտիկ տալի, տեսնում է, որ Ջան-խարդաշը ցլիկը մորթել է, միս արել, հուշում է մեկն էլ մորթի:

Ասում է.— Վա՛յ, գլխիդ դուրբա՛ն, էլ հերիք է մորթես, գնա՛, գնա՛, կառնես:

Դա՛ էդ Ջան-խարդաշը վեր է կենում, գնում ա: Գնում է, տեսնում մի իլդարած:

էս իլդարածն ասում է.— Փարակյոթ, ո՞ւր ես գնում:

Մա էլ ասում է.— ...Ո՞վ է փարակյոթը:
Ասում է իլղարածը.— Բա ի՞նչ ասեմ:
Ասում է.— Ջան-խարդաշ ասա:
Ասում է իլղարածը.— Ջան-խարդաշ, ո՞ւր էս գնում:
Դա ասում է.— Գնում եմ իմ հոր ու իմ աղբրտանց արինը
Հուշապից առնելու:
Իլղարածն ասում է.— Ճըվել իմ էն մադյանները ցած անելը,
էդ իլղերը բռնես, վեր հելլես քշես, փիմանամ, որ կառնես, թէ չէ՞
չես կրնար առնել:
Դա երես հետ է թեքում դենը, Ջան-խարդաշը իլղի քամակն է
ըլլում, դես քշում, դեն քշում:
Իլղարածը մտիկ է տալի, որ ձիուն դես դեն քշում է, սպա-
նում է:
Դա ասում է.— Պա՛, պա՛, պա՛, հերիք է քշես, ձին սպանե-
ցիր, հորդ ու աղբրտանցդ արինը կառնես դե՛հ, գնա:
Գնում է դա: Հուշապն աղջկան դուս է ղրկում, ասում է.—
Տե՛ս, ի՞նչ է դալի:
Աղջիկը դուս է գալի, մտիկ է տալի, որ հրես մի թոզ ու դու-
ման է գալի:
Գնում Հուշապին ասում է.— Պա՛, պա՛, պա՛, մի զարմանալու
թոզ ու դուման է դալիս:
Հուշապն ասում է.— Մենք էլ դրա խըսմաթը:
Մի քիչ մտիկ է տալիս, ասում է աղջկան.— Աղջի՛, դուս մտիկ,
տես, դա ի՞նչ է:
Աղջիկը մտիկ է տալի, որ հրես մի մարդ է գալիս զարմանալու:
Աղջիկը գնում է Հուշապին ասում.— Մի մարդ է գալի զար-
մանալու:
Հուշապն ասում է.— Մենք էլ դրա խըսմաթն ենք:
Մի քիչ մտիկ է տալիս, ասում է աղջկան.— Աղջի՛, մտիկ
տուր, տես թէ բաղի շափարը եկին է անցկանում, թէ կամաց:
էս աղջիկը մտիկ է տալի, որ դեռ էդ մարդի ոտը հասիլ չէր,
շափարը կորավ:
Գնում է ու Հուշապին ասում է.— Դրո ոտը շափարին չէր հա-
սի, շափարը կորավ:
Հուշապն ասում է.— Մենք էլ դրա խըսմաթ:
— Աղջի՛,— ասում է Հուշապն,— դուս ե՛լ, մտիկ տուր, հա-
զողը ճիթ-ճիթ է ուտում, թե գիլլա-գիլլա:
Աղջիկը մտիկ է տալի, որ վազն էլ ուտում է հետը:

Աղջիկ գնում Հուշապին ասում է.— Պա՛, պա՛, պա՛, դու հա-
ղորդի դարդումն էս, քու տուն շինվի, վազն էլ կերավ:

Հուշապն ասում է.— Ես էլ դրա խըսմաթը:

— Աղջի՛, — ասում է Հուշապ — դուս ե՛լ, տես աղբրի պարզ
տեղիցն է խմում, թե պղտոր տեղիցը:

Աղջիկը մտիկ է տալի, որ աղբրի պարզ ու պղտորը չհարցրեց,
չիմ խմեց:

Աղջիկը գնում է ու Հուշապին ասում է.— Պղտոր, չիմ խմեց:

Հուշապն ասում է.— Ես էլ դրա խըսմաթ:

էս Զան-խարդաշը գնում է ու Հուշապի դռան կաղնում:

Ասում է.— Հուշա՛պ, դուս արի:

Հուշապը դուս է գալիս, դեսանց է՝ ռե՛ֆ, ռե՛ֆ անում, չի կա-
րում քաշում իրան, որ կուլ տա:

Զան-խարդաշը թուրը հանում է ու վրա բերում Հուշապին
կիսընե շաղկա տալի, իրեք աղբեր մին է դուս գալի, իրեք՝ մին
խրաղից, բայց հորնեբրուն դուս գնացած՝ կելլա:

էս վեց աղբերը Զան-խարդաշին ծեծում են, թողնում չեն, որ
հետնուն գնա իրանց տունը:

էս Զան-խարդաշը էստեղ նստում լաց է լինում, ըժում վեր է
կենում խոլում. գնում է, տեսնում, որ մի խնձորի ծառը, մտիկ է
տալի, որ վրեն խնձոր կա:

Վեր է ըլլում դա վեր ծառին, խնձոր ուտում, մեկ էլ տեսնում
է, որ մի արջ եկավ խնձորի ծառի տակ ու ասեց.— Զան-խարդա՛շ,
վեր արի ծառի վրիցը:

Դա վեր է գալի ծառիցը:

Արջն ասում է.— Զվալը մտի:

Դա մտնում է ջվալը:

Արջը շլակում ու տանում ճամբուն վեր ա դնում, ինք ջըրվեղ
է գնում:

Զան-խարդաշը ջվալից դուրս է գալի: էդտեղ մի քոթուկ ա
ըլլում, Զան-խարդաշը բերում ա ջվալի մեջ ա դնում, ինքն ետ է
գնում, խնձորքուն վեր էլլում:

Արջը դալիս է ջվալը ուտում, շլակում, տանում:

Արջը դնում է ասում իրան մորը, թե.— Նանի՛, նանի՛, Զան-
խարդաշ եմ բերել, մորթի ուտենք:

Մերն ասում է.— Ա՛յ որդի, էդ քոթուկը բերել ես, ի՞նչ անեմ.
էդ քոթուկը Զան-խարդա՛շն է՛...

1 Մարտի—Մ. Բ.:

Արջն ասաց.— Ա՛խ, Ջան-խարդաշ, էդ քեղանում կթողում, որ դու ինձ թալ ես էկել:

Արջը գնում է, տեսնում, որ խնձորքու վրա է էլի Ջան-խարդաշը, ասում է.— Վեր արի՛:

Ջան-խարդաշը վեր է դալի խնձորքու վրիցը:

Ասում է արջը Ջան-խարդաշին.— Ջվալը մտի՛:

Մտնում է Ջվալը ու Արջը շալակում տանում, ճամբումը վեր է դնում, ինքը դնում է ջրվեդ:

Ջան-խարդաշը մի ցաքի կոն ա տեսնում, բերում է կոխում ջվալի մեջ: Ժում ինքը դնում խնձորքուն վեր ըլլում:

Արջը գալիս էդ ջվալը վերում ա տանում, մորն ասում.— Նանի՛, բերել եմ Ջան-խարդաշին:

Մննն ասում ա.— Ա՛յ որդի, Ջան-խարդաշ ո՞ւր է, ցաքի կոնին բերել էս ի՞նչ անենք, դա կմորթվի՞, որ մորթենք ուտենք:

— Ա՛խ,— ասում է Արջը,— դու վա՛յ ես տվեր, թե քեզանում թողում էդ:

Ջիգրի՛ գալիս է ու գնում, գնում է տեսնում է, որ էլի խնձորքու վրա է, ասում է.— վեր արի՛, Ջան-խարդա՛շ:

Վեր է դալի:

Արջն ասում է.— Ջվալը մտի՛:

Մտնում է Ջվալը:

Արջը վեր է էնում, տանում, էլ ճամբում վեր չի դնում, տանում է մորն ասում.— Ա՛յ նանի՛, հիմի եմ բերել, մորթի՛, էփի՛ ուտենք:

Ժում ինքը դու ա ըլլում տանիցը: էս Ջան-խարդաշը դու է գալի ջվալի միջիցը, Արջի մորը վեր կոխում, մորթում, էփում մի լավ, ինքն էլ ուտում մսիցը:

Ժում թռչում օճոռքը, էնտեղ ինքը տափ անում:

Արջը տուն ա դալի էնա միսը էփած, ընա վեր էլում, ուտում, ասում է.— Ջան-խարդաշ, ի՞նչ ... քոք տեղեր եմ ուտում:

Ջան-խարդաշն էլ էն տեղանց ասում է.— Պը՛լլ՛լլ՛լ, քու մոր քոք տեղերն էս ուտում:

Արջը էսենց կողքերի վրա մտիկ է անում, տեսնում է զատ չկա, մեկ էլ մեկ կտոր միսը վեր ա ունում, համ ուտում, համ ասում.— Ջան-խարդաշ, ինչ քոք տեղերն եմ ուտում:

Հետո ասում է Ջան-խարդաշը.— Պը՛ղը՛ղը, քու մոր քոք տեղերն էս ուտում:

Արջը էսենց մտիկ է տալի, տեսնում է, որ օճոռքում է, ասում է.— Պա՛ա՛ա՛, Ջան-խարդաշ, էդ ո՞նց ես էդտեղ էլլել, բարձրացել:

էն էլ ասում է.— Ի՞նչ կա, հեշտ է:

Ասում է Արջը.— Ի՞նչ տամ, որ շանց տաս ընձի էլ, տեղ ըլլի
բարձրանամ գամ քո կուշտը:

էն էլ ասում է.— Ի՞նչ կտաս, որ շանց տամ՝ բարձրանաս:

Արջն ասում է.— Դե դու ասա, տենեմ, ի՞նչ էս ուզում, որ տամ:

Ջան-խարդաշն էլ ասում է.— Դու ի՞նչ ունես, որ ես ուզեմ՝
տաս, մի պարապ տուն ունես, տանդ ղադ շկա, ի՞նչ ուզեմ:

Արջն էլ ասում է.— Դու տուն ի՞նչ ես անում, փող ուզե, որ
փող տամ:

Ջան-խարդաշն ասում է.— Հո՞ւր է քո փողը, հանե նշանց
տուր. որ շանց տամ, դաս էստեղ:

Արջը իրան մտքում մտածում է, որ. «էս փողերը հանեմ
սրան շանց տամ, ղաթի որ ինք մըշան անե, ինձ քով տանե, ես
սրան պեթարը կանեմ, փողերը ինձ կմնա»:

Իր մտքում Արջը մտածում ու փողերն՝ օխտ կուքում օսկի,
որ բուխարի միջին թաղած է եղեր, գետնի միջին, փորում հանում:
Ջան-խարդաշը մտիկ է տալի, տեսնում, որ Արջը փողը հանեց:

Արջն ասում է.— Դե՛, Ջան-խարդաշ, տեսնո՞ւմ ես, որ փո-
ղերը հանել եմ, շանց տուր, որ ես էլ էդտեղ հլլեմ: Տեսնո՞ւմ էս,
որ սուտ շեմ ասում:

Ջան-խարդաշն ասում է.— Մի՞թե ես էլ սուտ կասեմ, ես էլ
դորթ կասեմ:

Արջն ասում է.— Դե շանց տուր, որ վեր ըլլեմ:

Ջան-խարդաշն ասում է.— Ա՛յ էդ մեծ ջղացաքարը, որ կա
էդտեղ, ես կցեցի շըլինքս, ժում ծուլ էլա հընկա ըստեղ: Հըմի էլ
դու շըլինքդ գցի, խալիմ ծուլ է՛լ, կըլլես էստեղ:

Արջը էն մեծ ջղացաքարը գցում է իրան շըլինքը, ժում որ ղա-
լիմ ծուլ ա լում, որ օճոռքին ըլլի, քարը էդ արջն վեր ա բերում.
ջարդուխուրդ ա անում:

Արջն ասաց.— Ո՞նց շանց տվիր, որ շկարացի վեր ըլլել, վեր
հընկա շարդուխուրդ ըլլա:

Ջան-խարդաշն ասում է.— Պա՛, ի՞նչ կա, ես վեր կգամ, պա-
կաս բաներդ էլ ես կը դրստեմ, շանց կուտամ:

Ժում վեր է գալի: Արջ հենց գիդում է, թէ իրան օգնել պիտի,
ինքը սատկում է քարի տակը: Ջան-խարդաշը վեր է գալի, էնտեղ
կացին է ըլլում, վեր ունում: Ջաղացքարը Արջի շըլինքում է լինում,
Արջը քարի տակին է լինում, գլուխը դուրս:

Արջը ասում է.— Էդ կացինով, քարի կեսին որ տաս՝ կկոտրի քարը, ես դուրս կգամ:

Էդ Ջան-խարդաշն էլ կացինով սկսում է արջի գլխին տալ: Մի էրկու հատ տալիս է թէ չէ, Արջը սատկում է: Հընենց էն տեղը հոր ա ըլլում. արջը գցում է մեջը, էն ջաղացքաքարն էլ ըոխին գցում, էն օխտ կուքում ոսկին վեր է էնում, գնում:

Ասում է.— Գնամ տենամ, թէ իմ մերս, աղբերտինքս ի՞նչ ըլլան:

Գնում է, տեսնում է, որ իրան մերը մենակ, էն վեց տղեն իրանց մորերուն վեր են կալել գնացել: Մերը էնքան դարդ է արել, որ՝ «տղեն գնաց ու չէկավ»:

Գնում է, ասում է.— Ա՛յ նանի, էնքան աշխատել եմ, որ միշտ մեր մահը հերիք է, բերել եմ օխտ կուքում օսկի, ըմա,— ասում է,— իմ էն վեց աղբեր ուր կըլլին, թըղ ըլլին, աստված իրանց սրտով, իրանց գործքով, իրանց փայ տա, ոնց որ իմ հետս արին:

Նոր կերան, խմեցին, քեփ արին, լավ-լավ տներ շինեցին. չըվել օրն մահուն բարին մեր օջախում, չարն անօրենի օջախում, բարին մեր կշտին, չարն անօրենի կշտին:

